

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒԼԻՍԻ 30-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Մարգարիտա Սարգսյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության փորձագետ, 2021 թվականի փետրվարի 1-ից մինչև հուլիսի 30-ը կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի նախագծերի լրամշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք հանրային քննարկումների: Լրացրել եմ նախագծի հիման վրա կազմված ամփոփաթերթը:

➤ Կազմել եմ ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային կառույցներին ուղարկվող պաշտոնական նամակների նախագծեր:

➤ Մասնակցել եմ մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի նախագծի կազմման աշխատանքներին:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ քրեական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ, մասնավորապես.

- ազատությունից զրկված անձանց առողջության պահպանում քրեակատարողական հիմնարկներում և բժշկական կազմակերպություններում,
- դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի կազմակերպում և դրա առնչությամբ պատիժը կրելու ռեժիմի փոփոխություններ,

- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կրթության, աշխատանքի կազմակերպման, քրեակատարողական հիմնարկների այլ գործառույթների մասնավորեցում,
  - ազատությունից զրկված անձանց բժշկական սպասարկում և դեղորայքային ապահովվածություն,
  - քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ սոցիալական, իրավական, հոգեբանական աշխատանքների իրականացում,
- Պատասխանել եմ քաղաքացիներից (այդ թվում՝ դատապարտյալներից և կալանավորված անձանցից), հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացված ընթացիկ գրություններին:

Հարգանքով՝



ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

02.08.2021 թ.